Հաշվետվություն
կատարած աշխատանքների մասին
(10.07.2024թ. - 09.06.2025թ.)

1. Վերականգնվող էներգետիկայի ոլորտի առկա խնդիրների բացահայտմանն ու լուծմանն ուղղված աշխատանքներն իրականացնելու համար կատարել եմ միջազգային փորձի ուսումնասիրություններ և վերլուծություններ (այդ թվում՝ Միջազգային արևային դաշինք, Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալություն, ՄԱԿ-ի կառույցներ/UNECE, UNESCAP՝ տարածաշրջանային համագործակցության զարգացման հնարավորություններ, ՄԱԿ-ի կայուն զարգացման 7-րդ նպատակի իրականացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալություն, Համաշխարհային բանկ/WB), ներկայացրել եմ առաջարկություններ.
2. Ինքնավար էներգաարտադրողների կայանների շահագործման և այդ ընթացքում առաջացող խնդիրների կանոնակարգման նպատակով ստեղծված աշխատանքային խմբում ուսումնասիրել եմ վերականգնվող էներգետիկայի ոլորտի, մասնավորապես արևային կայանների գործունեության հետ կապված աշխատանքների իրականացման համար ոլորտը կարգավորող իրավական ակտերը՝ համեմատելով դրանք ԵՄ երկրներում գործող իրավակարգավորումների հետ.
3. ուսումնասիրել եմ արևային կայանների գործունեության հետ կապված իրավակարգավորումների եվրոպական երկրների փորձը (ԵՄ երկրների առաջավոր փորձ/Ֆրանսիա, Գերմանիա, Նիդերլանդներ, Իսպանիա), ներկայացնել եմ համապատասխան մասնագիտական առաջարկություններ.
4. իրականացրել եմ վերականգնվող էներգետիկայի ոլորտի գիտատեխնիկական ծրագրերի, գիտատեխնիկական առաջընթացի և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ուսումնասիրություն և դրանց ներդրման միջոցառումների մշակման աշխատանքներ (Կանաչ տաքսոնոմիա, կանաչ ֆինանսավորում, կանաչ ջրածին, մաքուր տեխնոլոգիաներ, ջերմային պոմպեր).
5. Բարեխղճորեն կատարել եմ պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Էներգետիկայի վարչության
վերականգնվող էներգետիկայի
բաժնի փորձագետ՝ Վ. Քեշիշյան